

Հատուածները կը դառնան անհասկանալի, այսպէս «աշխարհէն» կը գրուի «աշխարհէն», եւ կը կարծուի Weltschmerz (Ա. Գ. Թ., էջ 432), «յԱրտաբան կողմանէ» (Ա. Գ. Թ., էջ 460) գրչե մը մեկնութեամբ, որուն միտքն է ինկեր-հայերէն «արուեստական», բառը (Մարկուարտ, Հայ բարեպաշտ, էջ 8) կը խանգարուի վենետիկեան օրինակին մէջ՝ «յարտաբան», «կարողանալ» կը փոխուի «կարողանալ» (կշտամբեմ), Ոսկ. Մեկն. Ես., էջ 37, «յարտաբան», կ'ըլլայ «միտքաբան» (Կիւրեղ, Մեկն. Արարածոց, Թոռնեան, Հատ. ընթ. Ա., էջ 372. Մատենադարանի Թ. 902 Ձեռագրին մէջ, Թղ. 4ա), «կարողանալ» (Եփեսոս, Գ., էջ 110) կը դառնայ «կարողանալ» (Թ. 983 Ձեռ. Ե) եւ այլն. նման փոփոխութեան ենթարկուած է անհասկած նոյնպէս նախկին ոչ սովորական «դարձ» կարգացուելով ընթացիկ «դարձ»:

գրակ:

13. «Արդ զի մի ի տգիտութենէ ոգիքն կորցեն, սակաւ գրաւիւնս զամենայն հրամանս հաւատոց ի ներքս առաք», Կիւրղի կողման ընծայութեան Կ. Պ. սպազբութեան ընծայած այս բառը (էջ 96—97) անփոփոխ ու անհասկած կը հիւրընկալէ ՀԲ. եւ կը մեկնէ στοιχεῖον. elementum եւ versiculum, զիւր փոքրիկ կամ սակաւ. տարր գրոց. նշանագիր. հարձ. եւ ստիքս. սող. ռեբը (Ա., էջ 584), ու այս մեկնութիւնը ընդունած են իբրեւ պատգամ Ջախջախեան (Բառ. Հայ. Իտալ.) եւ Չագճեան (Նոր Բարբառարան): Նման բառ մը սակայն չեն ճանչնար տրամադրելի ուրիշ օրինակներ. Ա. ինննայի տպագրութիւնը կը կարգայ «սակաւ կարգաւ զամենայն հրաման հաւատոցն ի ներքս առաք», էջ 84, որ արտագրուած է Մատենադարանի Թ. 273 Ձեռագրէն Թղ. 64բ, այսպէս ունի նաեւ Մատենադարանի Թ. 912 Ձեռագրերը, «սակաւ կարգաւ զամենայն հրաման հաւատոց ի ներքս առաք», Թղ. 18ա ու կանոնաւոր այս ձեւը լրակապի կը համապատասխանէ յոյն բնագրին տուած ἐν ὁλίγοις τοῖς στίχοις ընթերցուածին քան «գրաւ» անբնականը:

Հ. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՄՈՎՍ. ԽՈՐ. Ա. ԼԱ.

«Ապա թէ բոց ունէր մաւրուս. եւ աչկունքն էին արեգակունք»:

Վահագնի երգին այս երկու տողերը Սորենացոյ նաեւ ըննական հրատարակութեան մէջ պահուած է անփոփոխ: Մատենադարանի ծանօթութեան մէջ զիտեւ տուած է միայն. «Ապա թէ հաւանորէն չկրնակի (այս ինքն Սորենացոյ) բառերն են եւ ոչ երգի հատուած, ուստի յարմար կ'ըլլէր փակագծի մէջ դնելը»:

Ես պիտի առաջարկէի կարդալ.

Նա հուր հեր ունէր, բոց մաւրուս. եւ աչկունքն էին արեգակունք:

Ուստի ապա թէ... ունէր Մ. Սորենացոյ յաւելուածներն են կցուած մի միայն՝ երգին սահուն ընթացքն խանգարելու եւ դասական լեզուի նկարագրին եղծանելու համար: «Ունէր» դետեղուած անականի եւ զոյականի մէջ տեղ, չի կրնար հանդուրժել դասական հայերէնը, որուն նկարագրով զրուած է ամբողջ երգը: Հելլենարանի զպրոցի սիրած այս ձեւը իւրացուցած է նաեւ Սորենացին եւ ինչպէս այլուր, նոյնպէս այս տեղ կ'իրարկած: Ի հարկաւորութեան պիտի ըսէր հին երգիչը. «ունէր եւ բոց մորուս», որ աւելորդ էր սակայն:

Արեգ ակունք աւելի համապատասխան է երգի ընթացքին եւ իմաստին «որովհետեւ աչկունքն ոչ թէ արեգակունք, արեգակնի՛ր էին, այլ արեգ ակունք, արեւ ակներ, լուսաճաճանչ քարեր. ինչպէս որ հերն՝ հա՛ւր էր եւ մօրուքն՝ բոց»:

Հ. Ն. ԱՅՈՆՅԱՆ



- 64. Վարք ձեմա Գալղանի կուսին: Թրգմ. Հ. Բ. Վ. Յովնանեան: Վիեննա 1929: 8<sup>o</sup>, էջ 174:
- 65. Տեղեկագիր եւ հաշուեկշիռ 21րդ շրջանի Հ. Բ. Ը. Միութեան: Գահիրէ, Հ. Բ. Ը. Մ. տպ., 1928: 8<sup>o</sup>, էջ 98:
- 66. Տեղեկագիր Վառնայի նախորդ թաղականութեան... գործունէութեան 1919—1923 շրջանին: Վառնա, Ենովքեան, 1924: 8<sup>o</sup>, էջ 48: Գին՝ 3 լէվա:
- 67. Abeghian Art. — Die neue armenische Literatur, ի թերթին Deutsche Rundschau, 1928, Aug., Berlin.
- 68. — — Die wissenschaftlichen Einrichtungen in Armenien, ի թերթին Minerva-Zeitschrift. Berlin 1926, Heft I.
- 69. — — Dorpats Einfluß auf das armenische Geistesleben, ի թերթին Der Deutsche Gedanke. Berlin 1926, Nr 20.
- 70. Arslanian Kr. G. — Armen, under the Stars and stripes, or learning the English language, I. Part. Aleppo, Arax print., 1924. 8<sup>o</sup>, էջ 112. Տես Հայերէն-Արսլանեան:
- 71. Aslan Kévork — Études historiques sur le peuple arménien. Nouvelle ed.

- illustrée par Fr. Macler. Paris, P. Geuthner, 1928. 8<sup>o</sup>, էջ 339 + 16 planche.
- 72. Contes, Légendes et épopées populaires d'Arménie, I. Contes. Traduits par Fr. Macler. [Les joyaux de l'Orient, tome XIII.] Paris, P. Geuthner, 1928. 8<sup>o</sup>, էջ 162.
- 73. Cuendet G. — L'ordre des mots dans le texte grec et dans les versions gothique, arménienne et vieux slave des Évangiles. I. Partie; Les Groupes nominaux. Collection linguistique, tome XXVI. Paris, ed. E. Champion, 1929. 8<sup>o</sup>, էջ 175.
- 74. Der-Alexanian Manoog — When I was a boy in Armenia. Boston, Sothrop, Lee, Schepord Co., 1927. 8<sup>o</sup>, էջ 170.
- 75. Rohé, Jehan de — Chouchanik, La jeune arménienne. Paris, Editions Argo, 1928. 8<sup>o</sup>, էջ 252. Գին՝ ֆր. 12.—:
- 76. Seth-Mesrob J. — Khojah Petrus, the armenian marchand-diplomat of Calcutta, from 1756—1763. Արտապ. „Bengal: Past and Present“, Vol. 37, Part. II. Calcutta 1929. 8<sup>o</sup>, էջ 17.

ՀՈՅՍ ՏԵՍՄԻ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՐԱՆ

ՄԵԷ.

**ԾՈՐՈՒՄԻ ԱԻԱԶԱՆԸ**

ԳՐԵՑ

Ա Տ Ր Գ Ե Տ

Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Գ Ա Ր Ա Ն

1928

ՀՈՅՍ ՏԵՍՄԻ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՐԱՆ

ՄԵԷ.

**Մ Ի Կ Ր Ը Զ Ա Յ Ո Ց Մ Է Զ**

Գ Ր Ե Ց

Թ Ա Դ Ե Ս Ա Ի Դ Ա Լ Բ Ե Գ Ե Ա Ն

Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Գ Ա Ր Ա Ն

1929